Հաշմանդամության Նպաստներ

Ի՞նչ է Սոցիալական Ապահովության հաշմանդամության ապահովագրությունը

Սոցիալական Ապահովությունը ամսական նպաստներ է վճարում այն անհատների, որոնք չեն կարող աշխատել մտային կամ մարմնական հիվանդության պատճառով: Այդ վիճակը պետք է տեւի մի տարի կամ ավել, կամ էլ ակնկալվի ավարտվել մահով:

Նպաստների պահանջներին իրավասու լինելու համար դուք պետք է ունենաք բավականաչափ երկար եւ ընթացիք աշխատանք՝Սոցիալական Ապահովության օրենքների համեմատ:

24 տարեկանից առաջ հաշմանդամ դառնալու դեպքում, ձեզ անհրաժեշտ է ունենալ մեկուկես տարվա աշխատաք, ձեր հաշմանդամությունը սկսվելուց առաջ 3 տարվա ընթացքում:

Եթե 24-ից 30 տարեկան եք, ընդհանրապես, պահանջվում է որ աշխատած լինեք 21 տարեկանից մինչեւ հաշմանդամ դառնալու պահը ընկած ժամանակամիջոցի կեսի ընթացքում:

31 տարեկանում կամ ավելի ուշ հաշմանդամ դառնալու դեպքում պահանջվող աշխատանքը կախյալ կը լինի հաշմանդամ դառնալու պահին ձեր տարիքից: Միեւնույն ժամանակ, դուք պետք է աշխատած լինեք հաշմանդամ դառնալուց անմիջապես նախորդող 10 տարվա ընթացքում 5 տարի: Նպաստների պահանջներին բավարարելու համար քաղաքացիություն չի պահանջվում, սակայն դուք պետք է ունենաք Ամերիկայի Միացեալ Նահանգներում աշխատելու օրինական թույլտվություն:

Ընտանիքի Նպաստներ

Ընտանիքի որոշ անդամներ կարող են նպաստներ ստանալ ձեր աշխատանքի հաշվից, ներառյալ՝

- 18 տարին չլրացած ձեր ամուրի երեխան, կամ 19 տարեկան՝ եթե տակաւին հաճախում է երկրորդական վարժարան լրիվ ժամանակով,
- 18 տարին լրացած ձեր ամուրի երեխան՝ եթե մինչեւ 22 տարին լրանալը դարձել է հաշմանդամ,
- Ձեր 62 տարեկան (կամ ավել) տ արիք ունեցող կինը կամ ամուսինը: Ձեր կինը կամ ամուսինը նաեւ իրավասու կը լինի որեւէ տարիքում եթե խնամում է 16 տարին չլրացած ձեր երեխային, կամ ձեր հաշմանդամ երեխային որը նպաստ ստանում է ձեր աշխատանքի հաշվից:

Ի՞նչպես դիմել հաշմանդամության նպաստների

Դուք կարող եք դիմում ներկայացնել անձամբ ձեր ցանկացած տեղական գրասենյակը, հեռախոսով կամ փոստի միջոցով: Բացի հիմնական դիմումից, ձեզանից կը պահանջվի նաեւ լրացնել մի հարցարան մեզ տեղեկացնելու ձեր վիճակի մասին եւ նրա ազդեցությունը ձեր աշխատելու կարողության վրա: Մենք նաեւ պետք ունենք ձեզնից գրավոր արտօնություն ձեր բժիշկներից տեղեկություն ստանալու համար:

Ձեր դիմումնագրի ընթացքը արագացնելու համար պատրաստ ունեցեք, յուրաքանչյուր բժշկի, դարմանատան կամ հիվանդանոցի անունները, հասցեները, հեռախոսահամարները եւ բուժման ամսաթվերը, որպեսզի կարողանանք նրանցից ձեր բժշկական փաստաթղթերը ստանալ: Դիմումի հետ կապված հարցազրույցի ժամանակ պետք է պատրաստ լինեք ներկայացնելու վերջին 15 տարվա ձեր աշխատանքային գործունեյությունը: Պետք ունենք նաեւ վերջին տարվա ձեր W-2 թղթիկը կամ՝ եթե ինքնաշխատ եք, վերջին տարվա ձեր հարկային հայտարագրի օրինակը:

Ո՞վ է կայացնում հաշմանդամության որոշումը

Ձեր դիմումնագրի բժշկական մասը ուղարկում ենք Նահանգային Հաշմանդամության Որոշման Ծառայության (DDS) մոտ: Հաշմանդամության մասնագետ քննիչներ, ստանալով ձեր բժշկական փաստաթղթերը, ուսումնասիրում են տեղեկությունը եւ կայացնում որոշում ձեր պարագայի վերաբերյալ: Եթե պետք լինի հաւելյալ տեղեկության, նրանք կարող են ուղարկել ձեզ անվճար բժշկական քննության:

Ե՞րբ է սկսվում նպաստների վճարումը

Ձեր դիմումը բավարարելու դեպքում, ձեր հաշմանդամության առաջին նպաստը կը վճարվի ձեր հաշմանդամությունը սկսվելուց վեցերորդ լրիվ ամսից:

Ի՞նչպես օգնում է Մէտիքէրը

Մէտիքէրի նպաստները ձեզ ինքնաբերաբար մատչելի կը լինեն երկու տարի հաշմանդամության նպաստ ստանալուց վերջ: Մէտիքէրը առողջության ապահովագրական մի ծրագիր է 65 եւ ավել տարիք ունեցող անձերի համար եւ հաշմանդամների որոնք 65 տեականից փոքր են: Այն կարող է վճարի հիվանդանոցի եւ բժշկի ծախսերի մի մասը:

Եթե չեք կարող բավարարել Սոցիալական Ապահովության պահանջներին

Եթե դիմեք Սոցիալական Ապահովության հաշմանդամության նպաստների եւ չունեք բավականաչափ աշխատանք Սոցիալական Ապահովության օրենքների համեմատ, մենք կը

(շրջել)

քննարկենք ձեր պարագան տեսնելու եթե կարող եք հաշմանդամության վճարումներ ստանալ Լրացուցիչ Ապահովության Եկամուտի (SSI) ծրագրից: Լրացուցիչ Ապահովության Եկամուտը վճարումներ է տրամադրում այն մարդկանց, որոնք ունեն փոքր եկամուտ (կամ էլ ոչինչ) եւ ունեն քիչ դրամական միջոցներ, լինելով հաշմանդամ, կույր եւ կամ 65 տարեկան կամ ավել:

Լրացուցիչ Ապահովության Եկամուտի իրավասու լինելու համար նախկինում աշխատելը պարտադիր չե: Երկու ծրագրերն էլ կարավարվում են Սոցիալական Ապահովության վարչության կողմից, սակայն Լրացուցիչ Ապահովության Եկամուտը Սոցիալական Ապահովության հարկերից չի վճարվում: Հաշմանդամությունը նշանակվում է նույն կարգով, սակայն այլ կանոնների կիրառմամբ: Լրացուցիչ Ապահովության Եկամուտի վճարումների մասին հաւելյալ տեղեկատվություն ստանալու համար կարդացեք «*Լրացուցիչ Ապահովության Եկամուտի Վճարումներ*» հրատարակությունը (հրատարակության համար 05-10702-AM):

Ո՞րքան է շարունակվում հաշմանդամության նպաստների վճարումը

Սոցիալական Ապահովության հաշմանդամության նպաստները կը շարունակվեն այնքան ժամանակ որքան շարունակվում է ձեր հաշմանդամությունը եւ աշխատելու անկարողությունը: Եթե դուք կարողանաք աշխատել եւ ապահովել բաւարար նիւթական հասույթ, դուք հաշմանդամ չեք համարվի եւ ձեր նպաստները կդադարեն:

Այնուամենայնիվ, եթե հաշմանդամության նպաստներ ստանալու ընթացքում փորձեք աշխատել, մեր հատուկ կանոնները ձեզ թույլ են տալիս որ ստանաք ձեր նպաստները՝ մինչեւ կարողանաք կանոնավոր աշխատանքի վերադարնալ: Դրանք ընդգրկում են՝

- Աշխատանքի փորձարության ժամանակաշրջան՝ 9 ամիս (հաջորդական լինելը պարտադիր չի) որի ընթացքում ձեր հասույթը չի ազդի ձեր նպաստների վրա.
- Իրավասության երկարացված ժամանակաշրջան՝ 36 ամիս, որի ընթացքում դուք կարող եք նպաստ ստանալ այն ամիսներին, երբ ձեր հասույթը որոշակի մակարդակից ցածր լինի: 2005 թվականում այդ մակարդակն է 830 դոլար: Այս արժէքը ամեն տարի բարձրանում է.
- Հաշմանդամության հետ կապված ծախսերի պահում՝ ձեր հաշմանդամության պատճառով ունեցած աշխատանքային ծախսերը պակսեցնում ենք ձեր ամսական հասույթից: Սա նաեւ պակսեցնում է այն գումարը որը մենք նկատում ենք բաւարար նիւթական հասույթ.
- Մէտիքէրի շարունակում՝ձեր Մէտիքէրի ապահովագրությունը կը շարունակվի 93 ամիս (7 տարի եւ 9 ամիս)՝աշխատանքի փորձարության ժամանակաշրջանից դուրս: Եթե ձեր Մէտիքէրի ապահովագրությունը դադրում է ձեր աշխատանքի պատճառով, դուք կարող եք գնել այն ամսական շահաբաժինով:

Աշխատանքի օրենքների մասին հաւելյալ տեղեկություն ստանալու համար կարդացեք *Working While Disabled—How We Can Help* (հրատարակության համար 05-10095). (*Աշխատել Հաշմանդամ Վիճակում-Ինչպես Կարող ենք Օգնել հրատարակությունը*): Այս հրատարակությունը Հայերէն լեզվով չկա:

Մենք պարբերաբար վերաքննելու ենք ձեր առողջական վիճակը ձեր հաշմանդամության ընթացքը ստուգելու նպատակով: Քննումների հաճախականությունը կախյալ է ձեր հաշմանդամության լավանալու հավանականությունից: Վերաքննումները կարող են լինել 6-ից 18 ամիսը մեկ, երբ ակնկալվում է առողջության բարելավում, 7 տարին մեկ՝ եթե չի ակնկալվում առողջության բարելավում:

Սոցիալական Ապահովության հետ կապ հաստատել

Հաւելյալ տեղեկության համար, այցելեցեք մեր կայքէջը, ***www.socialsecurity.gov*** ուր նաեւ կարող եք գտնել մեր վերջին հրատարակությունները: Կարող եք նաեւ զանգահարել հետեւյալ անվճար թվին **1-800-772-1213** (խուլերը եւ դժուար լսողները թող զանգահարեն հետեւյալ հատուկ TTY թվին **1-800-325-0778**): Ինքնաշխատ հեռաձայնային ծառայությամբ, մենք որոշ հարցերի կարող ենք պատասխանել եւ տեղեկություններ հայթայթել օրը 24 ժամ:

Եթե թարգմանիչի Պետք Ունեք. Մենք ձեզ համար անվճար թարգմանիչ կարող ենք տրամադրել որպեսզի դուք կարողանաք մեզ հետ ձեր գործերը կատարեք: Այս թարգմանչական ծառայությունը կարող եք գտնել մեր գրասենյակներում եւ հեռաձայնի վրայ: Զանգահարեցե՛ք մեզ հետեւյալ թվին **1-800-772-1213** եւ ճնշե՛ք թիւ մէկը: Հեռաձայնը պատասխանող ներկայացուցիչը միացնում է ձեզ թարգմանիչի հետ որպեսզի ան օգնէ ձեզի: Եթե չ՛կարողացանք հեռաձայնով օգտակար լինել, ժամադրություն ենք տալիս որպեսզի դուք այցելեք ձեր տեղական գրասենյակը որտեղ ներկայ կը լինի նաեւ թարգմանիչը:

Մենք բոլոր խօսակցությունները գաղտնի պահում ենք: Ուզում ենք նաեւ վստահ լինել, թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու քաղաքավար ծառայություն: Այս պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ խօսակցությունները:

Social Security Administration
SSA Publication No. 05-10701-AM
Disability Benefits (Armenian)
January 2005